

մնացեալ մասը, թէպէտ դեռ ևս անկախ յայլ իշխանութենէ, այլ արդէն սկսած էին լքանել իրենց հայրենիքը, մէկ կողմանէ պարտասեալ Սէլճուք թրքաց յաճախակի յարձակմունքից, միւս կողմանէ յոյն կայսերաց հարստահարութենէն, որք միշտ պնդած են թէ Հայոց աշխարհքը իրենց պէտք է ենթարկուի:

1021 ին երբ Յովհաննէս Սենեքերիմ Վասպուրականի թագաւորութիւնը թողլով, իւր իշխանութիւնը Վասիլ Բ. Յունաց կայսեր ձեռքը, քաշուեցաւ ի Կապադովկիա, աշխարհին բնակիչքը շատ անգամ ստիպուեցան թողուլ լքանել իրենց ծննդական երկիրը:

Գրիգոր երէց՝ Հայոց ԺԲ դարու պատմագիրը. յայտնապէս կը մեղադրէ յոյները, պատմելով 1160 ին հանդիպածը, ուր ի միջի այլոց կը յաւելու. « Յունաց կայսերք ոչ մի բան արած չեն քրիտոսնէից ազատութեան համար, ընդ հակառակն իրենք պատճառ եղած են, նոցա քաղաքներուն և գաւառներուն կործանման: Այդ իշխանապետաց շնորհիւ ահա հարկադրեցան Հայք լքանել իրենց հայրենիքը, անհաւատք զօրացան, և յաճախակի յարձակմամբ տիրեցին ամենայն կողմանց, սկզբան Արծնոյ, Մելիտոնոյ, Սերաստիոյ և մայրաքաղաքին Անուոյ, ապա նոցա ջոկատները տարածեցին իրենց աշխարհակալութիւնը մինչև ցմերձակայս Կ. Պօլսոյ ¹ »:

Կախ և առաջ Հայք կը գաղթէին կայսրութեան ասիական գաւառաց մէջ, այլ սխալ է կարծելը որ Հայք ընդ միշտ այն տեղուանք մնացին. զի կրօնական հալածանք և տակաւ թրքաց յառաջ խա-